ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Թ Յ Ո Ւ Ն

27 սեպտեմբերի 2014 թվականի N 131-Ա

ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն և 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին հակակարկտային կայանների կառուցման նպատակով հատկացված միջոցների հաշվին, մարզի համայնքներում կառուցված և շահագործման հանձնելու նպատակով՝ **կարգադրում եմ.**

1. Ստեղծել ավարտված շինարարական օբյեկտները ընդունող հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- ***Կարեն Պապոյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

- ***Մհեր Եղիազարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

- հանձնաժողովում ընդգրկել նաև համապատասխան համայնքների ղեկավարներին (համաձայնությամբ), կապալառու, տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին, համապատասխան դպրոցների տնօրեններին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինության պետական տեսչության տարածքային ստորաբաժանման ներկայացուցիչներին (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովին՝ տեղում ուսումնասիրել ավարտված շինարարական օբյեկտների համապատասխանությունը հաստատված նախագծային և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և ներկայացնել համապատասխան ակտ:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2014 թվականի սեպտեմբերի 27
ք. Հրազդան